Վերլուծություն
«Տեղական մակարդակում, որոշումների կայացման գործում երիտասարդների ներգրավվածությունը»

ՀՀ-ն երաշխավորում է տեղական ինքնակառավարումը՝որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:[1] Իսկ ժողովրդավարական հասարակությունում երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին՝ հանդիսանում է հասարակության կայուն զարգացման, համայնքային ներառման և սոցիալական արդարության հիմքը: Սակայն տեղական ինքնակառավարման գործինթացին մասնակցելու երիտասարդների իրավունքը երբեմն սահմանափակվում է՝ պայմանավորված թե՛ արմատավորված որոշակի երևույթներով, թե՛ որոշակի մեխանիզմների բացակայությամբ:

Ներկայումս ընդունված է երիտասարդությանը դիտարկել մի սերունդ, որը հանդես է գալիս իր ակտիվ դիրքորոշումներով և անցնում է հասարակության մեջ իր սոցիալական դերերի ձևավորման փուլը: Այս փուլը առաջնահերթ նշնակություն ունի սոցիալական ինքնաբավության զարգացման գործում, քանի որ ուղղակիորեն ազդում է հասարակական և մասնագիտական հիմնական գործառույթների յուրացման գործընթացի վրա: Հարկ է ընդգծել նաև շրջապատող հասարակության դերը՝ երիտասարդի կայացման գործում: Սոցիալական հասունությունը անձի կյանքի կարևոր փուլերից է, քանի որ այդ ժամանակ է անձը աչքի ընկնում իր ինքնաբավությամբ և ինուրույնությամբ:[2] Երիտասարդ է համարվում 13-35 տարեկան անձը:

Երիտասարդական քաղաքականության սկզբունքներից մեկը, դա երիտասարդության՝ որպես երկրի զարգացման շարժիչ ուժի դիտարկումն է, ապահովելով տարբեր ոլորտային ծրագրերում երիտասարդության շեշտադրումը, ինչպես նաև երիտասարդների մասնակցությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում, երիտասարդական նախաձեռնող խմբերի ներգրավվածության կարևորումը:[3]

ՀՀ-ում քաղաքական, հասարակական, մշակութային, գիտական և տնտեսական կյանքին երիտասարդների մասնակցությունն ապահովված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մի շարք իրավական ակտերով:

Տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն երիտասարդական միություններին օրենսդիր մարմիններում երիտասարդների ակտիվ մասնակցությունը խթանելու հարցում:[4]Համայնքի երիտասարդների կյանքին առնչվող կրթական, ժամանցային,

---

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 9 https://www.arlis.am/hy/acts/102510

[2] «Формы социальной активности молодёжи участие местном самоуправлении», էջ 281 https://cyberleninka.ru/article/n/formy-sotsialnoy-aktivnosti-molodyozhi-cherez-uchastie-v-mestnom-samoupravlenii/viewer

[3] «Երիտասարդական քաղաքականության մասին »ՀՀ Օրենք,հոդված 2,3 https://www.un.org/esa/socdev/unyin/documents/wpay2010.pdf

զբաղվածության, ենթակառուցվածքների, առողջապահական, առողջ ապրելակերպի տարբեր խնդիրների բացահայտման և լուծման մեջ կարևոր է երիտասարդ և ՏԻՄ երկխոսությունը: Երիտասարդների մասնակցությունը գործընթացներին, որոշումների կայացմանը, համայնքային կյանքում ինքնուրույնաբար տեղի չի ունենում: Որպեսզի երիտասարդները ներգրավվեն մասնակցային գործընթացներին, ուստի ՏԻՄ ոլորտի ներկայացուցիչները, պետք է անհրաժեշտ միջոցառումներ իրականացնեն,բարենպաստ պայմաններ ապահովեն, իսկ համայնքապետարանի կողմից բնակիչների մասնակցության, երիտասարդների կողմից առաջարկվող գաղափարների խրախուսումը, ակտիվ երկխոսության ծավալումը ու թափանցիկ աշխատանքը ևս կնպաստեն մասնակցայնության ինստիտուտի աստիճանական ամրապնդմանը:

Երիտասարդների մասնակցայնությունը ՏԻՄ-ում ենթադրում է ներկայացվածություն քաղաքական գործընթացներում և որոշումների կայացման մակարդակում: Մասնակցայնությունը ներառում է որևէ խնդրի վերաբերյալ կարծիք արտահայտելուց, հանրային նախաձեռնություններ իրականցնելուց մինչև քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևերում հայտնվելը:

Հասարակության առաջընթացը՝ ի թիվս այլ գործոնների, հիմնվում է երիտասարդների ներդրումների, պատասխանատվության, ապագայի ձևավորման և կառուցման գործընթացներում ներառելու ունակությունների վրա:Ներկայումս անհրաժեշտություն է տեղեկատվության մատչելիությունը՝ որպեսզի երիտասարդները կարողանան օգտագործել իրենց հնարավորությունները՝ որոշումների կայացման գործում: Երիտասարդներին պետք է հեշտությամբ հասանելի լինի տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես ներգրավվել, ինչ հնարավորություններ են առկա և որտեղ կարելի է փնտրել դրանք: Կարևոր է այդ տեղեկատվության մատչելիությունը, երիտասրադակենտրոնությունը: Անհաժեշտ է նաև աջակցել երիտասարդական միություններին՝ ֆինանսական, կրթական և տեխնիկական միջոցներով, ինչպես նաև խրախուսել ազգային, միջազգային մակարդակներում երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությունն ու փորձի փոխանակումները:[5]

Ներպետական օրենսդրությամբ սահմանվում է, որ երիտասարդներն իրավունք ունեն մասնակցելու պետության և համայնքի կողմից երիտասարդներին ուղղված քաղաքականությունների մշակմանը, դրա շրջանակում նախատեսված ծրագրերին և միջոցառումներին, որպես անհատ հանդես գալու սեփական նախաձեռնություններով և մասնակցելու ու առաջարկություններ ներկայացնելու՝ պետական կամ համայնքային մակարդակում կայացվող որոշումների շրջանակներում: Երիտասարդական նախաձեռնող խմբերը նաև կարող են հանդես գալ նախաձեռնություններով, մշակել և երիտասարդության

---

[4]« Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա» /հայերեն թարգմանությամբ https://kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf

[5] «Երիտասարդների համաշխարհային ծրագիր» ՄԱԿ 1995, էջ 42-45 https://www.un.org/esa/socdev/unyin/documents/wpay2010.pdf

շրջանում իրականացնել տարբեր ծրագրեր և միջոցառումներ, աջակցել երիտասարդական աշխատողներին, համայնքներում իրականացվող երիտասարդական աշխատանքին:[6]

Երիտասարդների ներգրավվածությունը տեղական մակարդակում որոշումների կյացման գործընթացներում համարվում է ժողովրդավարության, մասնակցային կառավարման և համայնքի զարգացման անբաժանելի մաս: Երիտասարդները համայնքային կյանքի ակտիվ դերակատարներն են՝ նրանց դիտարկումներն ու առաջարկները հաճախ դառնում են նորարարական, իրատեսական գաղափարների ծագման աղբյուր: Ուստի անհրաժեշտ է ձևավորել մասնակցության կայուն հարթակներ, ապահովել և խրախուսել երիտասարդկան նախաձեռնությունների գոյությունը:

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ,
Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան՝ Լիլիթ Հայրապետյան
06. 03. 2026թ.

6 «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենք, հոդված 8 https://www.arlis.am/hy/acts/204846